

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. ապրիլի 27-ի

նիստի /արձանագրություն N 15/

1. Մագիստրատուրայի կրթական ծրագրով 2016-2017 ուս. տարվա ընդունելության համար բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսման վարձավճարների չափը թողնել անփոփոխ և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:
2. ՀՀ ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպելու համար մատուցած ծառայության վարձավճարի չափը սահմանել 60.000 (վաթսուն հազար) դրամ,
3. ԵԹԿՊԻ-ի ռազմավարական ծրագրում ինստիտուտի առաքելությանը և նպատակներին վերաբերող պարբերությունը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ԵԹԿՊԻ-ն ազգային և համազգային նշանակության և դերակատարության կրթական, գիտաուսումնական և մշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը խաղարկային արվեստների և հարակից մասնագիտությունների բնագավառում գիտելիքների, հմտության ու կարողության միջոցով բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի կրթական ծրագրերով որակյալ մասնագետներ պատրաստելն է՝ ուսանողակենտրոն կրթական միջավայրի ապահովմամբ, ազգային և համամարդկային նշանակության մշակութային արժեքների պահպանման ու զարգացման միտվածությամբ՝ աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համահունչ»,
3.1 սույն որոշումը ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:
4. Հանձնարարել Կինոյի և հեռուստատեսության ամբիոնին ինստիտուտում առկա կինոտեխնիկայի ցուցակը ներկայացնել ռեկտորատի առաջիկա նիստի հաստատմանը,

- 4.1 գնումների գործընթացի կազմակերպման գործում առկա թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկած միջոցների վերաբերյալ Վ. Եղիազարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,
- 4.2 ներկայացումներից ստացված հասույթը Արցախի պաշտպանության ֆոնդին փոխանցելու համար թույլատրել ուսանողական թատրոնի ղեկավարությանը կազմակերպել տոմսերի վաճառք 700 դրամ, 1000 դրամ և 1500 դրամ արժողությամբ:
- 4.3 Հավանություն տալ ուսանողական կինոակումբի կազմակերպման առաջարկին:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան